36-ՐԴ ՆԻՍՏ

15 նոյեմբերի 1918թ.

Խաչատուր Կարճիկյանի հիշատակին

Ներկա են Երևանի փոխթեմակալը, վրաց դիվանագիտական միսիան, վարչապետը և մյուս մինիստրները. պատգամավորներն ու հասարակությունը պահպանում են հանդիսավոր լռություն: Նախագահում է Գ. Տեր-Խաչատրյանը. առաջին խոսքը տրվում է *վարչապետին,* որը խիստ հուզված ձայնով հայտարարում է հանրային խնամատարության մինիստր Կարճիկյանի եղերական մահը. հայտնում է, որ ոճրագործը ինքնակամ անձնատուր է եղել ու հանձնված է արդարադատության. վերջին խոսքը պատկանում է օրենքին, իսկ մինչ այդ հաստատապես կարելի է ասել, որ ոճրագործությունը զուտ քաղաքական բնույթ ունի: Կարճիկյանը զոհվեց իբրև քաղաքական պետական գործիչ՝ իր իսկ ընկերի ձեռքով. կորուստը շատ մեծ է ու ծանր հայ երկրի ու ժողովրդի և մանավանդ Հայաստանի կառավարության համար. պետական կյանքում մենք դեռևս շատ անփորձ ենք, և միակ մարդը, որ մտածում էր պետականորեն, էր հանգուցյալը, որը ոչ միայն իր մինիստրությունն էր վարում, այլև մեծապես օգնում էր իր մյուս ընկերներին. նա հայրենիքի սեղանի վրա դրեց այն ամենը, ինչ որ ուներ ու ընկավ. մնում է, որ հայրենիքը ևս կատարի իր պարտքը նրա հանդեպ:

Ոտնկայս հարգում է հանգուցյալի հիշատակը ու բոլոր ֆրակցիաների ներկայացուցիչները հարգանքի խոսք են ասում և ներբողում հանգուցյալի արժանավորությունները:

Հարությունյանը (դաշն.) շեշտում է, որ սպանությունը կատարվել է քաղաքական նպատակով ու առաջարկում է կառավարության՝ օրենքի ամբողջ խստությամբ դատել ոճրագործին և պարզել հանգուցյալի անբիծ դեմքը:

Ե. Հարությունյան (ժող.) - Միանալով ընդհանուր վշտին, առաջարկում է նախագահության ցավակցություն հայտնել հանգուցյալի ընտանիքին, թաղումը կատարել պետական հաշվով ու ապահովել ընտանիքի ապրուստն ու զավակների դաստիարակությունը:

Խոնդկարյանը ընդգծում է, որ Կարճիկյանը անսահմանորեն գնահատելի էր մանավանդ օպոզիցիայի համար, որպես մաքուր և շիտակ պետական գործիչ և թե ինչ անմտությամբ է կատարված սոսկալի ոճիրը:

Սոց.-դեմ. ֆրակցիայի կողմից *Ազատյանը* միանալով ընդհանուր վշտին և արտահայտված զայրույթին, ընդգծում է, որ ստեղծված մթնոլորտում հնարավոր են բազմաթիվ նման ոճիրներ, որովհետև մեր երկրում չկա իրավակարգ, պատասխանատվության զգացումը բացակայում է իսպառ և անպատիժ է մնում ոճիրն ու ապօրինությունը: Առաջարկվում է այդ դրությունից ազատվելու համար միջոցներ ձեռք առնել, որպեսզի ամրանա մեր պետության հիմքերը: Ապա խոսում են պատգամավորներ *Աղաբաբեկով, Զորին, Մամիկոնյան և Մելիքյան:* Վերջինս շեշտում է, որ ոճրագործը այժմ մի մեռած անհատ է, և իզուր են առաջարկում խիստ պատիժ տալ:

Ի հիշատակ հանգուցյալի, խորհուրդը հետաձգում է իր առօրյա աշխատանքները և նիստը փակվում է:

«Կայծ», թիվ 5: 21 նոյեմբերի 1918թ.